Հավելված N 2
ՀՀ կառավարության 2012 թ.
դեկտեմբերի 13-ի նիստի N 50
արձանագրային որոշման

Ց Ա Ն Կ

ՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

ՀՀ	Միջոցառման անվանում	Ակնկալվող արդյունք	Պատասխանատու մարմին	Համակատարող	Կատար-ման ժամկետ	Ֆինանսավորման աղբյուր
1.	2.	3.	4.	5.	6.	7.
I. ՄԱՐԴՈՒ ԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ						
1.	Մշակել և գործադրել մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների, ինչպես նաև դրանց դեմ պայքարի և կանխարգելման ընդհանուր հարցերը սամանող սանիտարահամաճարակաբանական կանոններ և նորմեր. մեթոդական փաստաթղթեր, ուղեցույցներ	Մինչ 2016թ. գործադրված սանիտարահամաճարակաբանական կանոնների և նորմերի արդյունքում հնարավորինս կկանխվեն մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունները, կստեղծվի փաստաթղթային բազա կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումները կազմակերպելու և իրականացնելու համար	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն	2014-2016 թվական	Ֆինանսավորում չի պահանջում
2.	Մշակել մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների գերակա հիվանդությունների ցանկի վերաբերյալ համատեղ հրաման	Մինչ 2016 թվականը կմշակվի մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների գերակա հիվանդությունների ցանկը, որի հիման վրա կմշակվեն սանիտարահամաճարակաբանական կանոններ և նորմեր, մեթոդական փաստաթղթեր, ուղեցույցներ	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	2014 թվական	Ֆինանսավորում չի պահանջում
3.	Մշակել և գործադրել արտակարգ իրավիճակում հակազդեցության ընթացակարգեր, ինչպես նաև առանձին գերակա հիվանդությունների մոբիլիզացիոն	Կմշակվեն և մինչ 2016 թվականը կգործադրվեն արտակարգ իրավիճակում հակազդեցության պլաններ և ընթացակարգեր,ինչը կապահովվի շահագրգիռ մարմինների միջև	Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	2015 թվական	Ֆինանսավորում չի պահանջում

	պլաններ.	համագործակցված աշխատանքները		Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն		
4.	Մշակել և գործադրել անասնահամաճարակների, պանզոոտիաների ժամանակ կենդանիների կարանտինացման, հիվանդ կամ հիվանդության նկատմամբ կասկածվող կենդանիների բուժման, հարկադիր սպանդի կամ ոչնչացման չափանիշներ	Կմշակվեն և մինչ 2016 թվականը կգործադրվեն անասնահամաճարակների, պանզոոտիաների ժամանակ կենդանիների կարանտինացման, հիվանդ կամ հիվանդության նկատմամբ կասկածվող կենդանիների բուժման, հարկադիր սպանդի կամ ոչնչացման չափանիշներ	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության և պետական ծառայություն	2015 թվական	Ֆինանսավորում չի պահանջում
5.	Մշակել մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական հսկողության համակարգում մարմինների, տնտեսությունների ընդգրկվածության և բուժկանխարգելիչ կազմակերպությունների, լաբորատորիաներն գնահատման հարցաշարեր	Մինչ 2016 թվականը կգնահատվեն մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական հսկողության համակարգում մարմինների, տնտեսությունների ընդգրկվածությունը և բուժկանխարգելիչ կազմակերպությունները, լաբորատորիաները կինտեգրվեն համաճարակաբանական հսկողության համակարգում՝ ապահովելով միանման գնահատման համակարգ	Հայաստանի Հարապետության առողջապահության նախարարություն	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	2016 թվական	Ֆինանսավորում չի պահանջում
II. ՄԱՐԴՈՒ ԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ						
6.	Ըստ մարզային մակարդակի սահմանել և գործադրել մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների վերլուծության և գնահատման ցուցանիշների մեթոդական ուղեցույցներ.	Մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների վերլուծության և գնահատման համար, ըստ մարզերի, սահմանված ցուցանիշներով կիրականացվեն համաճարակային իրավիճակի վերլուծություններ, կանխագուշակումներ, կձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ հետագա համաճարակային իրավիճակներից	Հայաստանի Հարապետության առողջապահության նախարարություն	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	2016 թվական	Ֆինանսավորում չի պահանջում

		խուսափելու համար				
7.	Մշակել և գործադրել ստանդարտ մեթոդաբանություններ՝ մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների և ընդհանուր համաճարակաբանական հսկողության համակարգի պարբերաբար գնահատումներ իրականացնելու համար	Գործադրված ստանդարտ մեթոդաբանություններով իրականացված համաճարակաբանական հսկողության համակարգի գնահատումների արդյունքում, մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ կիրականացվեն իրավիճակային վերլուծություններ, կհաշվարկվեն դրանց մասնաբաժինները ընդհանուր վարակիչ հիվանդությունների մեջ՝ ըստ առանձին նոզոլոգիաների,	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	2016 թվական	Ֆինանսավորում չի պահանջում
8.	Հայաստանում մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների ռիսկերի գույքագրման և քարտեզագրման նպատակով մշակել և գործադրել մեթոդական ուղեցույցներ	Մինչ 2016 թվականը իրականացված մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների ռիսկերի գույքագրման և քարտեզագրման արդյունքում վեր կհանվեն առավել ռիսկային գործոնները, կմշակվեն մեխանիզմներ դրանց վերացման ուղղությամբ	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	2016 թվական	Ֆինանսավորում չի պահանջում
9.	Մշակել և ներդնել մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման ռիսկերի գնահատման, դրանց կառավարման և նվազեցման համակարգեր՝ մեթոդաբանություն, ընթացակարգ	Ներդրված մեթոդաբանության և ընթացակարգերի արդյունքում կապահովվեն մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների տարածման և տեղայնացման միջոցառումները	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	2015 թվական	Ֆինանսավորում չի պահանջում
10.	Զարգացնել մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների բռնկումների վարման ուղեցույցները՝ այլ շահագրգիռ մարմինների հետ	Մինչ 2016 թվականը, այլ շահագրգիռ մարմինների հետ համատեղ, կզարգացվեն մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների բռնկումների վարման ուղեցույցները,	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն	2014 թվական	Ֆինանսավորում չի պահանջում

	համատեղ.	կապահովվեն միասնական և միանման մեխանիզմներ՝ մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների կանխարգելման և հակահամաճարակային միջոցառումներ իրականացնելու համար		Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)		
11.	Մշակել և ներդնել մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների բռնկումների զեկույցի ձև՝ շահագրգիռ մարմինների համագործակցությամբ	Մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների բռնկումների շահագրգիռ մարմինների հետ համատեղ մշակված զեկույցի ձևը կապահովի լիարժեք և մանրամասն անհրաժեշտ տեղեկատվությունը և փոխտեղեկատվության մեխանիզմները	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	2015 թվական	Ֆինանսավորում չի պահանջում
III. ՄԱՐԴՈՒ ԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ						
12.	Արագ արձագանքման ազգային մակարդակի թիմի անդամներին մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների արձագանքման, մասնավորապես՝ հակահամաճարակային միջոցառումների կազմակերպման և իրականացման հարցերի վերաբերյալ ուսուցանելու նպատակով մշակել ուսուցողական նյութեր	Մինչ 2016 թվականը մշակված ուսուցողական նյութերը արագ արձագանքման ազգային մակարդակի թիմի անդամներին կապահովեն անհրաժեշտ կրթական նյութերով՝ ձևավորելով արագ արձագանքման հմտություններով օժտված կադրային ներուժ	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն	2016 թվական	Ֆինանսավորում չի պահանջում

				Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)		
IV. ՄԱՐԴՈՒ ԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ						
13.	Մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների լաբորատոր ախտորոշում իրականացնող լաբորատորիաների համար մշակել և ներդնել կենսաանվտանգության ապահովման ձեռնարկ	Կենսաանվտանգության ապահովման ձեռնարկի ներդրումը կապահովի հստակ սահմանումներ եվրոպական մոտեցումներին համահունչ անվտանգ լաբորատոր պայմաններ ձևավորելու համար	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	2016 թվական	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված միջոցներ
V. ՄԱՐԴՈՒ ԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ						
14.	Հաշվառել մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների ոլորտում ընդգրկված կադրային ներուժը և քարտեզագրել ռեսուրսները, մշակել և ներդնել մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական հսկողության իրականացման վերաբերյալ կադրերի պատրաստման ծրագիր	Մինչ 2016 թվականը կապահովեն մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների ոլորտում ընդգրկված կադրային ներուժի և ռեսուրսների հաշվառումն ու քարտեզագրումը, առկա կադրերը կուսուցանվեն համաշխարհային մոտեցումներին համահունչ ծրագրերով	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	2016 թվական	Ֆինանսավորում չի պահանջում
15.	Մշակել մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների վարժանքների թեմատիկ և գործնական խաղարկային թեմաներ, որի արդյունքների և «քաղված դասերի» հիման վրա մշակել մեխանիզմներ կադրերի գիտելիքների շարունակական կատարելագործման համար	Մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների վարժանքների թեմատիկ և գործնական խաղարկային թեմաների, «քաղված դասերի» հիման վրա կլրամշակվեն կրթական ծրագրերը՝ ապահովելով կադրային ներուժի գիտելիքների շարունակական կատարելագործումը՝ արդյունքում ձևավորելով արձագանքման զգայուն համակարգ	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն	2016 թվական	Ֆինանսավորում չի պահանջում

				Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)		
16.	Մշակել և ներդնել մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների վերաբերյալ վարժանքների իրականացման վերաբերյալ զեկույցի ձևաչափ	Վարժանքների վերաբերյալ զեկույցի ձևաչափը կապահովի լիարժեք և մանրամասն անհրաժեշտ տեղեկատվությունը՝ ձևավորելով փոխտեղեկատվական համակարգ, որի արդյունքում կբացառվեն միևնույն թեմաների շուրջ կրկնվող վարժանքները	Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	2016 թվական	Ֆինանսավորում չի պահանջում
VI. ՄԱՐԴՈՒ ԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ						
17.	Կազմել մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների ոլորտում գիտահետազոտական աշխատանքների ծրագրեր՝ բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ	Մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների ոլորտում բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ կազմված գիտահետազոտական աշխատանքների ծրագրերը կխթանեն գիտական ներուժի մասնակցությունը գործնական աշխատանքներում, որի արդյունքում կձևավորվի մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական հսկողության առավել զգայուն և իրատեսական համակարգ	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	2014-2016 թվականներ	Ֆինանսավորում չի պահանջում